



ԽՈՐԱՅՈՂ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹԵԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ

Արցախեան հակամարտու-
թիւնը թեակոխում է մի նոր՝ պա-
ռերազմական փուլ: Եթէ հակա-
ակորդի համար առաջուայ նման
անփոփոխ մարտավարական գիծ է
մնում ԼՂՀի ամբողջ տարածքում
կարուածութեան օջախների պահ-
պանումը, ապա միեւնոյն ժամա-
նակ վերջին շրջանում հիմնական
նարուածը կենտրոնացուել է Աս-
տրանի շրջանի եւ յատկապէս
մայրաքաղաքի վրայ: Օգտուելով
այս տարածքում ունեցած ռազմա-
վարական նշանակութեան բնակա-
վայրերի առկայութիւնից, ադրբե-
ջանցիք փորձում են առաջին հեր-
թին հենց այստեղ գերակշռութեան
նասնել, շրջապատող օդակից ան-
ընդհատ յարձակումների կրակի
ուակ հոգեբանական ճնշում գոր-
ծադրել բնակչութեան վրայ, խար-
խել մայրաքաղաքի ինֆրապաշտ-
պանական վահանը: Չնայած սը-
րան, վերջին շաբաթներին, ի շը-
նորհիւ հայ ազատամարտիկների
վնասական գործողութիւնների, հա-
կառակորդն ինքն է ենթակայ բա-
րոյական ու ֆիզիկական աննա-
խաղէպ ճնշման: Փաստօրէն,
նուսկու հակահարուածով հնարա-
ւոր եղաւ լիովին ազատագրել
Հաղբուքը, շրջանի մակարդակով
բոշոր նուաճում արձանագրել
Մարտունի քաղաքի խոջաւէնդ
քաղամասի չեզոքացմամբ, մի
քանի կարեւորագոյն յաղթանակ-
ներով Ստեփանակերտ քաղաքի
շրջակայքում, եւ, ի մասնաւորի,
ճամբիլու գիւղի գրամամբ:

Այս ամենի հետեւանֆով այսօր
տունապային եւ նոյնիսկ սարսա-
փ տրամադրութիւններ են նկատ-
ուում Արցախի գրեթէ բոլոր ա-
դրբեջանաբնակ բնակավայրե-
րում: Դրանցից շատերից, եւ, այդ
պէսով Շուշի քաղաքից ու խոջաւու-
նանից, բնակչութեան մեծ մասը
հեռացել է: Չնայած այս ամենին,
կայսրութիւնը մեզ համար աւելի
կտանգաւոր է դառնում, քանի որ
այսօր Արցախի դէմ կուում են ոչ
միայն տեղական ուժերն ու ԼՂՀ
ազակող շրջանները, այլեւ Հան-
րապետութիւն ուղարկուող ադրբե-
ջանական կազմաւորուող բա-
նակի կանոնաւոր զօրամիաւո-
րումները: Այս հզօրացող ընդդի-
մութեանը անկասկած է, որ Ար-
ցախը միայնակ չի կարող դիմա-
գրաւել, եւ անհրաժեշտութիւն է
Հայաստանի իշխանութիւնների
կողմից պաշտպանութեան պետա-
կանօրէն կազմակերպումը: Մա-
նուաւնդ, որ անգուշակելի է, թէ
կոնֆլիկտը մօտ ապագայում ինչ
շրջանակ կարող է ընդգրկել: Այ-
նուամենայնիւ, գոյակոխն այսօր
չարունակուում է, ի շնորհիւ անձ-
նագոհութեան, որով հայրենի հո-
ւր պաշտպանուում է նրա զաւակ-
ների կողմից:

Դեկտեմբերի 16ին, Ստեփա-
նակերտից ոչ հեռու ընկած, դէպի
Ազգամ տանող ռազմավարական
կարեւոր նշանակութեան Հասա-
նաքաղ գիւղի պաշտպանութեան
ժամանակ, կատաղի մարտում
հայկական կողմը կարողացաւ
չնահանջել դիրքերից, անհաւա-
ար մարտում տալով 3 զոհ: